ՃԽԳ.

Մայրավանքիս ընդհանուր նորոգութեան պատմութեան բաժնին համար կը գտնենք հետևեալ վաւերագիրը, որ որքան կարևոր մեզ՝ նոյնքան հետաքրքրական պիտի ըլլայ անշուշտ ազգայնոց։

Պայծառօրէն կը տեղեկագրուի Ս. Ղազար Կղզեկիս զանգակատան հիմնարկութիւնն ու շինութեան սկզբնաւորութիւնը, որոյ նկատմամբ չկայ մասնաւոր ծանօթութիւն մը Մխիթարայ վարուց կենսագիրներու հրատարակութեանց մէջ։

Աստուածասիրի և սիրելւոյ մեր իմոյ Ղուրէ Գատրնին, և բարեպաշտօն եղբարցդ իմոց ազնուականաց Նիկողայոս Աղային, Յակոբ Աղային, Յոհաննէս Աղային և Յարութիւն Աղային, բազում սիրով ողջոյն

... Իսկ յաղագս շինուածոց զանգակատան թէ կամիցիք գիտել ինչ, որպէս գրեցի յառաջնում թղթի՝ եթէ հանդերձեալ եմք զհիմն նորա արկանել, նոյնպէս և կատարեցաւ օգնականութեամբ տեառն, և ամենայն դիւրութեամբ՝ յամսօրեայ աւուրս յաւարտ հասուցեալ հիմն անդնդախոր և հաստադրական, յամսեանն հոկտեմբերի։ Եւ այժմ քարինք տաշեալ կան և ամենայն նիւթ պատրաստական. և սպասեմք քանի մի աւուրս, մինչև պարգևեսցէ տէր զԱբբայհօր մերոյ զկատարեալ առողջութիւն ի դժուարին ի հիւանդութենէ, որ պատահեաց նմա յաւուրս յայսոսիկ։ Զոր թէ տէր շնորհեսցէ, ակն ունիմք ընդ հուպ ի զատկիս սկիզբն լինիլ բարձրանալոյ շինուածոյս ի փառս քրիստոսի աստուծոյ մերոյ և ի պարծանս ձեր։ Առ որոյ շինութիւն խնդրեմ զեղբարցդ իմոց նպաստ. անյապաղ զդրամսն հասուցանել, անսուտ զձեր խոստումն առնելով, որպէս և պայմանեալ ժամանակի լրումնդ պահանջէ, և այնպէս իմոյ և ձեր փափաքանաց առնել կատարումն[1]*։...*

Ազնուականութեան ձերում
Յամենայնի պատրաստական

Նուաստ ծառայ
Հայր Վրթանէս վարդապետ [Ասկերեան]

Յամի տեառն 1749
ի մարտի 20
[*Վենետիկ*]

ՃԽԴ.

Ս. Ղազարու դիւանի շահեկան թուղթերու մեր հրատարակութիւնը կը հասնի այլևս Մեծին Մխիթարայ մահուան թուականին։

Հետևեալը գուժալից թուղթն է, որով Հ. Եղիա Վարդապետ՝ իբր Տեղապահ Աբբայի՝ համառօտիւ կը հաղորդէ մեր քարոզիչ վարդապետաց, տալով տեղեկութիւններ Գերյ. Աբբայիս մահուան շուրջ, ինչպէս նաև անոր հետևանքով ինչ ինչ կարևոր հրահանգներ։

---

1. Հ. Եղիա վ.է առ Հ. Զաքարիա գրուած մէկ նամակէն (որոյ մասին «Այս գիրս ոչ եղև յղեցեալ» գրուած է թուղթին սկիզբը) կը քաղենք հետևեալ տողերը. «Վասն շինուածոյ զանգակատանն ծանիք, զի այժմ մերժ են «յայն բարձրութիւն հասանել, յորում այնուհետև ոչ կդմեարով, այլ քարամբ միայն վերացուցանելոց են. և «յորժամ յայն չափն հասանին, դադարին ի շինելոյ մինչև ի գալ ամին, որպէս զի շինուածն հաստատեալ, «պնդեսցի ի վերայ հիման» (Յամին 1749, ի Մայիսի 11).